ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

Ամսագիր գիտության, գրականության և ազգային կյանքի

Խմբագրատեղին՝ Տիգրան Ալեքսանի Մանուկեան, Leonhardgasse 3

Տարեկան գինը 5 ռուբլի կէս արծաթով 3 ռուբլի

Բոլոր պատուիրակութիւնները պէտք է ուղղուին միայն խմբագրատեղին

Ցայտատարեգիրները պէտք է ուղղուին միայն Լեոնհարդգասսէ 10—2 դասարանը

(բացի կիրակի և տօն օրերից)։

Ցայտատարեգիրները չեն ընդունուիր

Հրատարակութեան տարեմուտին

1874

ՎԱՐԴԱՎԱՌԻ ՏՈՆԻՆ

№ 16. ՆՈՅԵՄԲԵՐ 25. ՆՈՅԵՄԲԵՐ 25 № 16.

ԴՈՒՔ ՄԻՆՉԵՎ ՉԵՔ

Ինչպէս ուրախ էր Վարդանը, երբ իր ընկերները նրան ասացին, որ Ալեքսանդրապոլում մի ուրիշ Վարդան կայ, որ ինչպէս նա՝ ուսանող է, ինչպէս նա՝ աղքատ է, ինչպէս նա՝ ազգասէր է, ինչպէս նա՝ գրում է, ինչպէս նա՝ ամէն ինչ անում է ազգի համար։

տաւորներ պատրաստելու, հիւանդի, հաց թխողի մօտ ուսմանը տալու, տուհցիք մեզ անպարկեշտ վարժապետներ, նատողական կեանք, պատուաստեցիք մեզ քնկշութիւն, տուհցիք մեզ դիմնազիական անպէտք ուսում, և մեր երկրում անիրագործելի համալսարանական բարձր ուսում:

Հասարակութիւնը ասեց մեզ, որ միայն ուսում առնենք, լաւ ուսում, բարձր ուսում մանաւանդ հոգեւորականական,—իսկ ստացածը և քրտինքով աշխատածը կեանքի մէջ գործ դնել տալու համար, խոստացաւ մեզ օգնելու....

Բայց մենք մեր պարտաւորութիւնը կատարելուց յետոյ, տեսնում ենք որ աւելորդ ենք:

Կամ պէտք է հասարակ արուեստաւորներ, մշակներ դառնայինք,—բայց այժմ, երբ տեսանք թէ սխալվեցանք, հաւատալով հասարակութեան խաբեբայ խոստումներին, միամիտ և անպէտք կերպով զոհեցինք մեր ժամանակը և կեանքը,—կամ պէտք է ապարդիւն ապրինք ձեր մէջ, միմեանց փոխադարձապէս չը հասկանալով, կամ պէտք է այնքան քաջութիւն ունենանք—կտրենք մեր բոլոր կապերը ձեզ հետ և գնանք օտարութեան մէջ....

Բայց եթէ այդ կանենք, դարձեալ դուք, որք համարում էք մեզ անպէտք, անընդունակ, վնասակար էակներ,—դարձեալ դուք կը մեղադրէք մեզ, որ մենք հասարակութեան անշնորհակալ զաւակներ ենք....

Ասացէք խնդրեմ, ինչով պիտի արտայայտվի մեր շնորհակալութիւնը, երբ ամեն ջանքը ի զուր է....

Գոնէ դու, դերահաս սերունդ, հասկացիր որ մենք դառը դառը սխալվել ենք, և գոնէ դու իմացիր ինչից պիտի սկսես,—և այդպէս էլ սկսիր... իսկ մենք անդարձ կորած ենք թէ կրթված աշխարհի համար, որովհետև այստեղի հասարակական հանգամանքները մեր բոլոր այժը ապարդիւն կերպով ծծել են,—թէ կորած ենք և Ասիայի համար....

Գոնէ նորերը թող իմանան ինչից պիտի սկսեն....

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԻՇԽԱՆ ԷՐԻՍՏՕՎԻ ԱՊԱԿՈՒ ԳՈՐԾԱՐԱՆԸ

Մեզ աջողվեցաւ այս օրերս այցելութիւն անել Գօրի քաղաքից դէպի հարաւ տասն և երկու վերստ հեռու գտնվող ապակու գործարանին, Գուաբէրի անուանված տեղում:

Գուաբէրիի դիրքը շատ բարձր է, և ծածկված է մանր անտառով, որ ցոյց է տալիս խիտ եղած անտառների հետքերը: Գործարանը գտնվում է մի ձորի մէջ, ուր արատ ջրիր՝ գետակներ և ազբիւրներ վազում են շրջապատող բարձրութիւններից:

Գործարանը արդէն 21 տարի է որ հիմնվել է Էրիստօվ իշխանների ձեռքով, որք ահագին գումարներ են ծախսել նրան պահպանելու և առաջացնելու համար,—բայց բոլոր ջանքը ի զուր էր.... Փայտով, մանաւանդ մայրի չը կար, անտառը անխնայ կտրվում էր և գործարանի հնոցը այնքան անյարմար և անխնայողական կերպով էր շինած, որ փայտի ահագին քանակութիւնը ի զուր էր այրվում նրա մէջ: Էրիստօվ իշխանները միայն ահագին ծախս ունէին և ոչ մի կօպէկ օգուտ.... Ապակը որ ապակեգործութեան հիմնական տարրը է, քերվում էր հեռուից, սօդա բերվում էր արտասահմանից.... Մանաւանդ հմտութիւններ չունեցող իշխանները, մեր բոլոր ազանէրին յատուկ ինքնահաւանութեամբ կամ ամեն բան իրանք էին ուզում անել, և ամեն բան ուրիշներից լաւ գիտէին, օրինակ կարդալով մի որ և է ռուսաց կամ ֆրանսիական հիղինակութիւն չունեցող գրքի մէջ ապակեգործութեան մի որ և է նոր մեթօդի մասին, չը հասկանալով կարդացածի խորհուրդը, միամիտ կերպով իսկոյն գործ էին դնում, և ի հարկէ ճիւաս էին կրում,—կամ ենթարկվելով մի որ և է շարլատանի ազդեցութեանը, անպայման սկսում էին հետևել նրա խորհուրդներին և վերջը միայն նկատում էին որ հարստահարված են եղել նրանից.... *)

Մի տարի սրանից առաջ իշխան Էրիստօվի գործարանը կապալով տրվեցաւ քանի մի տարով մի գերմանացու, Պ. Էպշտայնի, որ մանագէտ ապակեգործ է և որ երկար ժամանակ ապակու գործարան էր կառավարում գերմանական Սիլեզիա նահանգում: Պարոն Էպշտայնը գտաւ թէ գործարանի կազմակերպութիւնը, թէ նրա նպաստողական միջոցները ննջեսանձևի դրութեան մէջ: Հալոցի վառարանը այնքան ահագին էր, որ կրկնապատիկ աւելի փայտ էր գնում, քան թէ հարկաւոր էր հնոցը տաքացնելու համար: Ամբողջ հնոցը պիտի քանդվէր և նորից շինվէր: Նիւթերի կողմից ոչ ինչ խնայողութիւն չը կար, հում նիւթերը, ինչպէս աւազ, հեռու տեղերից էր բերվում, այն ինչ Պ. Էպշտայնը իսկոյն հասկացաւ հողի յատկութիւնից, որ մօտերքում պիտի գտնվի աւազ, և ձշմարիտ է շատ ժամանակ չանցաւ և նա գտաւ աւազի հարուստ խաւերը: Ջրերի բաղադրութիւնից նա ձանաչեց որ մօտիկ տեղերում կիր պիտի լինի: Գուաբէրիից ոչ հեռու գտնվող փոքրիկ լճերից նա սկսեց հանել գլաուբէրեան ազ, այն ինչ Պ. Էրիստօվը ահագին գումարներ էր վճարում գլաուբէրեան աղը արտասահմանից բերելով: Էրիստօվի կառավարութեան ժամանակը գլխաւոր աշխատողներից իւրաքանչիւրը շատ շատ ամսական 25 րուբլ էր ստանում,—այժմ վարպետները, որոնց թուում մինը գերմանացի է, երկուսը բօհեմացի, իսկ մնացածները ռուսներ, հայք ու վրացիք, ոչ թէ ամսով են ստանում իրանց ռօճիկը, այլ հատով են ստանում իրանց վարձը, այսինքն մի յայտնի վճար իւրաքանչիւր շինած շիշից, ուրեմն քանի աւելի գործեն, այնքան էլ իրանց օգուտ է,—այնպէս որ կան այժմ վարպետներ թէ հայերից, թէ վրացիներից, որք ստանում են մինչև 100 րուբլ ամսական: Էրիստօվի ժամանակը գործարանը շաբթվայ մէջ մի անգամ էր բանում միայն,—այժմ շաբաթը հինգ անգամ:

Ամեն մի գործարան պիտի իր մասնաւոր պարագաները ունենայ: Պ. Էպշտայնի գործարանը առ ժամանակ միայն գինու և գինիների շիշեր է գործում, գլխաւորապէս կանաչ և մասամբ սև ապակուց, թէև դժուար չէր սպիտակ ապակի պատրաստել, բայց այդ նրան ձեռնտու չէ, որովհետև սպիտակը չէ կարող գինու և մեզանում սովորական պահանջ գլաներ: Գինու կանաչ շիշերը այնքան լաւ են գործվում Գուաբէրիի գործարանում, որ մենք նրանց վստահ կարող ենք համեմատել արտասահմանեան շիշերի հետ: Հատը ծախվում է Թիֆլիսում 10 կօպէկով և պ. Էպշտայնը միջին թուով արդէն 20,000 շիշ է պատրաստում ամիսը:

Վերջացնելով մեր յօդվածը չենք կարող մի քանի խօսք չասել այն երևոյթի վրա, թէ ինչպէս պ. Իշխան Էրիստօվը և նրա գիւղացիքը անիրատեսաբար վարվում էին անտառի հետ:

Գիւղացիքը առանց հաշիւ տալու իրանց ունէին կտրել փայտ անտառի մէջ որքան կամենում են: Մի որ և է գիւղացի կերթայ անտառ, դիցուք երեսուն հատ ծառեր կտրելու նպատակով կը կտրի ծառերը ոչ թէ տակից, հողի հաւասարութեամբ, որ թարմ ճիւղերը կարողանային նորից բուսնել, այլ մարդու հասակի բարձրութեան վրա, այնպէս որ արդիւնք է ծառին նորից աճելու. երեսուն հատ ծառ կտրելուց յետոյ, գիւղացին որ և է պատճառով չէ հաւանում կտրած ծառերից մի քանիսը, և անհոգ թողնում է կտրած ծառերը անտառի մէջ փտելու....

Գործարանի չորս կողմը արդէն ոչնչացրած է անտառը և իշխանը բոլորովին չէ հոգում, որ նոր բուսնող թուփերը պահպանվեն, որ ժամանակով դարձեալ անտառը աճի, այլ թողել է տալիս որ այծերի և ոչխարների հօտերը ուտեն թարմ ճիւղերը և տերևները և այսպիսով բոլորովին անհոգ կերպով նայում է ինչպէս չորանում են նոր թուփերը, խոստանալով ապագայում մի անպատճառ ներկայացնել, ինչպէս արդէն անպատճառ են դարձել և Թիֆլիսի շրջակայքը և Կովկասի մեծ մասը....

Մենք չենք կարող մեր համակրութիւնը չը յայտնել պ. Էպշտայնի գործունէութեանը, որ առ ժամանակ շատ աջող է գնում... բայց ինչ կը լինի ապագան....

Մի կողմից գիտնական հմուտ մարդիկը իրանց բոլոր ջանք են գործ դնում, իսկ միւս կողմից ինքն կովկասեցին իր ձեռքով աւերում է իր սեփական անտեսական հարստութիւնները, ինքն յափշտակում է իր ունեցածը:

Երևի սրանք էլ ազգասէրներ են, ինչպէս և այն ազգասէր մանկավարժները, որք աւերում, յափշտակում են երեխաների, նոր սերունդի թարմ ուղիղը....

Ծարմանալի երկիր, որտեղ հարկաւոր է աւերել և յափշտակել՝ ազգասէր և օգտաւէտ մարդու անունը ստանալու համար...

Գ. Ա.

ՆԱՄԱԿ ՇՈՒՇՈՒՑ

Այս օրերում լսեցինք մի լուր, որ ոչ միայն գրաւեց մեր հետաքրքրութիւնը, այլև չարժեց մեր զարմացքը: Ռազմիս հարուստ, մի և նոյն ժամանակ պատուաւոր վաճառականներից մինը, պարոն Ա. Կեանջեցեանցը, անժառանգ լինելով, ցանկացել է իր հարստութեան մի մասն՝ այն է 30,000 րուբլի՝ նուիրել որ և իցէ բարեգործական նպատակի: Ցայսմիկ չէ ում խորհրդով մեծապատիւ պարոնը գիտաւորութիւն ունի յիշեալ գումարը ծախսել, որ նորանով քաղաքի գործածութեան համար ջուր բերուի: Մենք երբէք չէինք հերքելու մի այդպիսի ձեռնարկութեան օգտաւետութիւնը, եթէ քաղաքը ջրի օգտաւետութիւնը ունենար: Որոյ ընդհակառակն, խանի աղբկայ հանել տուած ջրանցքը մեր քաղաքին բաւականութիւն է տալիս: Յաւում ենք, որ մեծ. Ա. Կեանջեցեանցն ուշադրութիւն չէ դարձրել տեղւոյս մի անհրաժեշտ կարիքի վերա, այն է ժողովրդի ուսման ծարաւը,—նորա մտաւոր և բարոյական կրթութիւնը, որոց մասին դարման տանելու մեծ պահանջմունք կայ: Եթէ մեծ. Ա. Կեանջեցեանցը կամենում է իր անունը անմահացնել, և մի և նոյն ժամանակ իր ազգի օգտաւետ անդամներից մինն լինել, ցանկալի էր, որ նա յիշեալ գումարը գործ դնէր որ և իցէ ազգային հիմնարկութեան վերա օրինակի համար, տղայոց կամ օրիորդաց ուսումնարան քաց անել, կամ այլ դոցա նման հիմնարկութիւններ:

Շատ գեղեցիկ բան է օգնել հասարակութեանը,

զանազան հարստահարութիւններից, և այդ աւելի է գրաւում անպաշտպան ժողովրդին դէպի նոցա կողմը:

Բայց հայերն ինչ ունեն:—Ձմարիտն ասած, ոչինչ չունեն: Շատ բնական է, որ տկարները միշտ ենթարկվում են աւելի զօրեղ ուժերին և կորչում են նոցա մէջ, եթէ չը պահպանվէր նոցա գոյութիւնն որ և իցէ նոր և նպաստող զօրութիւնով, աւելի պարզ ասած, եթէ նորա մէջ չը գրաւէր այնքան ուժ, որ կարողանայ մրցութիւն անել իր հակառակորդի հետ.

Թէև կաթոլիկ միսիօնարներն աւելի քան հարիւր տարի և բողոքականներն աւելի քան քառասուն տարի բոյն են դրել Պարսկաստանում, եթէ այսքան ժամանակ հայը կարողացել է հեռու մնալ նոցանից և պահպանել իր եկեղեցին և ազգութիւնը, դորա պատճառն ուրիշ ոչինչ չէ, եթէ ոչ հայերի մոլեռանդութիւնը, որով նոքա նայում էին կաթոլիկին և բողոքականին, որպէս հերձանոնների վերա: Բայց այդ նախապաշարմունքն անցաւ: Այժմ Հայը հասկացել է, որ իր օրդուն հարկաւոր է ուսում, տեսնում է իր ազգի մէջ չը կայ ուսումնարան, տալիս է նորան բողոքականի վարժատունը և մեծ գոհութեամբ, որովհետև ոչինչ չէ վճարելու: Հայը ցանկանում է լսել Աստուծոյ խօսքը, իր եկեղեցւոյ բեմէն կարդացածներից նա ոչինչ չէ հասկանում, գնում է բողոքականի ժողովարանը, այնտեղ կինդանի խօսք է լսում, և այդ նորան աւելի բաւականութիւն է տալիս: Հայը այս ինչ և այն ինչ նեղութեան մէջն է, դիմում է միսիօնարին, նա օգնում է նորան, և եթէ նորա որդիքը քաղցած են, նա հաց է տալիս: Մինչդեռ մի այդպիսի օգնութիւն նա ոչ միայն չէ գտնում իր եկեղեցականներից, այլ ընդհակառակն նոքա հարստահարում են: Այժմ ուրիշ ինչ բան կարող է հայերին հեռու պահել այդ հոսանքից, եթէ ոչ ունենալ այն բոլորն, ինչ որ ունեն և անում են օտարները:

Բայց ինչ չունեցին Պարսկաստանում մեր եկեղեցականները:

«Ջաղցած փորին կորեակ հացն էլ դիւր է գալիս», ասում է ժողովրդական առածը: Դարերով մի ուսումնարանի երեսը չը տեսած հայ ժողովրդի աչքերը չլացնում են Առաջնորդները, միշտ մտանացոյց անելով Դավրէժի ազգային դպրոցի չորս պատերի վերա: Բայց ինչ արդիւնք է տալիս նա, այդ երկրորդական հարց է: Թողնենք միւս գաւառները, վեր առնենք միմիայն Ղարադաղը, ուր մօտ երեսուն հայ գիւղօրայք կան, մի ուսումնարան չունեն, ուր գոնեա հասարակ ընթերցանութիւն սովորեցնէին, մի քահանայ չունեն, որ կարողանար առանց տասը սխալ անելու «հայր մեր» ասել:

Մենք չենք կարող մեծ գոհունակութեամբ չը յիշել Պարսից կառավարութեան այն առանձնահոգութիւնը, որ պարգևել է հպատակ ազգերին՝ բոլորովին ազատ կերպով վարուել ամեն մի ազգային հիմնարկութիւնների մէջ, որք նպաստում նորա լուսաւորութեանը և յառաջադիմութեանը: Որպիսի և կամիս դպրոց հիմնիր, ինչ ուզդութիւն ցանկանում ես տուր նորան, կառավարութիւնը խառն չէ դորա մէջ, և մինչև անդամ չէ պահանջում իւրեանից թոյլտվութիւն խնդրել: Տպարան հիմնիր, լրագիր հրատարակիր...

Արդեօք կարողացան օգուտ քաղել Հայոց Առաջնորդներն այդ աղատութիւնից:—Մենք փոխանակ պատասխանելու մասնաւորապէս կը նկարագրենք Ատրպատականի Առաջնորդների, սկզբում Նիկողոս եպիսկոպոսից, նոցա մօտ երեսնամեայ գործունէութեան ընթացքը:

Մենք չենք կամենում յիշել նոցա անունները, միայն կը բերենք մի քանի փաստեր, որք յայտնի ապացոյց կարող են լինել նոցա անկարգ, գործավարութեանը: Թաթէոս Առաքելոյ, Բարդուղիմէոս Առաքելոյ, Սահմանոս Նախավկայի վանքերը վերջին աղքատութեան մէջ ընկան դոցա ձեռքով: Առաջնորդներից մինը Բարդուղիմէոս Առաքելոյ վանքի սրբութիւնքը գրաւ էր դրած մի թուրքի մօտ, որ յետոյ հազիւ ժողովուրդն իր միջից փող հաւաքելով կարողացաւ ազատել: 1827 թուին ռուսաց պարսից հետ պատերազմէն յետոյ, երբ Հայերը սկսան գաղթել դէպի Արաքսի այս կողմը, Ատրպատականի Իշխանը Նախիջեւ Սայթանան (Ապպաս Միրզան) հայերին գրաւելու համար, որ նոքա Պարսկաստանից չը գաղթեն, սկսաւ տալ նորանց զանազան արտօնութիւններ, օրինակի համար, Դավրէժի Հայ ժողովրդին ազատեց որ և իցէ հարկ վճարելուց, զանազան մելիքներին մշանջենաւոր ռոճիկ նշանակեց, դոցա թուումն էլ Սալմաստայ Հաճեան գիւղի եկեղեցուն, որ այն ժամանակ առաջնորդարան էր, չնորհեց մի ընդարձակ երկիր, որպէս եկեղեցական կալուածք (վագֆ): Եկար ժամանակ այդ հողը մշակում էին գիւղացիք և վճարում էին մի նշանակեալ տուրք եկեղեցուն: Բայց մեր պատուելի առաջնորդները կամաց կամաց սկսան այդ երկիրը վաճառել գիւղացիների վերա և փողն իւրեանց ջիբը դնել, մինչև բոլորովին սպառվեցաւ: Միայն արքայական դարդակ Ֆէրմանը մնաց Հայոց Առաջնորդարանում. Այն ևս մնաց արդիօք: Վերջապէս Առաջնորդներից մինը վաճառեց Դավրէժի գերեզմանատան համար ունեցած ընդարձակ հողի մի մասը: Բայց ժողովուրդը,—նա ոչ միայն ձայն չունի, այլ այսպիսի մի անզգայ դրութեան մէջ է, որ չէ հասկանում, թէ ինչ է գործվում նորա մէջ: Նա այսքանը գիտէ, երբ գործողն Առաջնորդն է՝ ուրեմն նա անսխալական է...

ԳՎՎԺՎՍՈՑ ԳՎԺՈՏՅՈ

ՄԻՔԱՅԵԼ ՀԱՅԿԱԶԱՆ

10 Նոյեմբերի Մոսկվա

Ժամանակ խնդրելով՝ «Նոր ժամանակ»ի խմբագրությունը ասում է, որ ինքն էլ ուզում է ասել իր խոսքը, բայց ոչ թե ամսագրի էջերում, այլ ուղղակի ընթերցողների հետ։ Ինչ որ ասելիք ունի, ասում է, ամսագրի էջերում ասելու համար շատ կարևոր է, և ինքը չի ուզում, որ իր խոսքը ընկնի ուրիշների խոսքերի մեջ։ Ինչ որ ասելիք ունի, ասում է, ամսագրի էջերում ասելու համար շատ կարևոր է, և ինքը չի ուզում, որ իր խոսքը ընկնի ուրիշների խոսքերի մեջ։

Ես այդպես էլ չհասկացա Պատկանյանի վարմունքի պատճառը։ Ես ոչ մի վատ բան չէի արել նրա հանդեպ, ես նրան ոչ մի վիրավորական խոսք չէի ասել, ես նրան ոչ մի անհարգալից վերաբերմունք չէի ցուցաբերել, ես նրան ոչ մի անհարգալից վերաբերմունք չէի ցուցաբերել։ Ես նրան ոչ մի անհարգալից վերաբերմունք չէի ցուցաբերել։

Ես ուզում էի նրան ասել, որ ինքն էլ ուզում է ասել իր խոսքը, բայց ոչ թե ամսագրի էջերում, այլ ուղղակի ընթերցողների հետ։ Ինչ որ ասելիք ունի, ասում է, ամսագրի էջերում ասելու համար շատ կարևոր է, և ինքը չի ուզում, որ իր խոսքը ընկնի ուրիշների խոսքերի մեջ։ Ինչ որ ասելիք ունի, ասում է, ամսագրի էջերում ասելու համար շատ կարևոր է, և ինքը չի ուզում, որ իր խոսքը ընկնի ուրիշների խոսքերի մեջ

ճչ այս յիմարներին... Անպէտք և ձևասակար անդամների թիւը մեր ազգի մէջ էն էլ թէ չէ բաւականին չատ է. զձանք այս ազգին։

Մարտի 18. փ. Վարդանեան։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Ախալքալաքից դրում են մեզ, որ «Մշակ» և „Մեղու“ լրագրների հետ տարածված Ախալցխայի եկեղեցուն պատկանեալ դիւղերի կապալով տալու յայտարարութիւնը, որի աճրդախօսութիւնը նշանակված է ամսիս 26-ին, կայծակի նըման զարհուրեցրեց այն մարդկանց, որոնց յայտնի էր կատարված իրողութիւնները, թէ ինչեր կրեցին Կարզախ, Սուլտա և Դաոէշ գիւղերի բնակիչները... Գիւղացիքը սաստիկ յուսահատութեան մէջն են և եթէ մանաւանդ յայտարարութեան 12-որդ յօդվածը չը փոխվի, մօտ 300 տուն հայ բնակիչներ ստիպված կը լինեն դաղթել օտար-րութեան մէջ... Ահա ինչ դրութեան է հասցնում հոգևորականների անհոգութիւնը մեր ժողովրդին... Կարզախ գիւղը, որ վից տարի սրանից առաջ ամենածաղկեալ դրութեան մէջն էր, այժմ հոգևորականների չնորհով բոլորովին աղքատացել է։ Ախալքալաքի սահմանում գտնված եկեղեցական գիւղերի բնակիչները ուրիչ մէջոց չունեն, եթէ ոչ բողոքել մեր թերթի միջոցով այդ յայտարարութեան մի քանի յօդվածների դէմ, որոնցից ուրիշ հետևանք չեն կարող սպասել, եթէ ոչ ժողովրդի տանջանք և արտասուք... նրանք խընդրում են, որ աճրդախօսութիւնը մի քանի օրով յետ ձգվի, կօնսիստօրիայից ուղարկվի նրանց մօտ մի հաւատարմատար, որի գործակատարութիւնը փորձուած լինէր, որ քննէր գիւղացիների թշուառ դրութիւնը փոքր առվի երկայնամտութեամբ, քան թէ այն քահանան, որ երկու թէ երեք տարի առաջ ուղարկուած էր... Եկեղեցական չորս գիւղերի բնակիչները, երբէք չեն կարող միասին վերցնել բոլոր կալուածքը կապալով, այլ պէտք էր նըշանակել իւրաքանչիւրին բաւականաչափ սահմաններ... Եթէ կօնսիստօրիան չը մտածէ այդ բանի վրա և յետ չը ձգի աճրդախօսութիւնը,—վտանգը մեծ է։—Միւս համարում կը տպենք այդ թշուառ դրութիւնը աւելի մանրամասնաբար նըկարագրող յօդվածը։

***

Ապրիլի 14-ին, տեղի ունեցաւ Թիֆլիսի առևտրական բանկի տարեկան ընդհանուր ժողովը։ Տարեկան հաշիւ զեկուցումն եղաւ, որ ժողովից ընդունվեց և հաստատվեց։ Մենք լսում ենք, որ բանկի բաժանորդների բազմութիւնը մերժեց Բագու և Փոթի քաղաքներում բանկի բաժիններ հիմնելու կարևորութիւնը։

ՑԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Նիկոխանեան Ձայոց Ազգային-Ձոգևոր Դըպրոցի Ձոգաբարձութիւնը նշանակում է ածըղ-դախօսութիւն (տօրգ) և երեք օրից յետոյ կրկնաձրդախօսութիւն (պերետօրժկայ) կապալ (իջարայով) տալու նոյն Դպրոցի կալուածքը՝ ընծայած Եւետիք Փիլոյեանցից, որ գտանվում է Սօլդատսկի անուանած փողոցումը, արևելեան կողմից 7 կըպակներով և նոցա վիրնայարկով և նկուղներով, հարաւային կողմից 10 կըպակներով և հիւսիսային կողմից երեք կրպակներով և նոյնպէս վիրնայարկով և բակով, և բակումը գտնված շինուածքով։ Պայմանաթուղթը (կանդիցիան) ցանկացողը կարող են կարդալ Ձոգաբարձութեան դիւանատան մէջ ամեն օր, բացի կիւրակէից և տօներից, առաւօտեան 10 ժամից մինչև 10 ժամն կէսօրի, և ձրդախօսութեան օրը նախկայանալ նոյն Դպրոցումը Ձոգաբարձութեան խորհրդարանի մէջ օրինաւոր գրաւականաւ, որ պիտի լինի կամ անանուն դրամ(ադրամ) բանկի (բանկի բիլէթ) կամ առձեռն դրամ (նաղդ փող) համաձայն պայմանաթղթին։ Ձրդախօսութիւնը լինելու է 1874 թուականի Մայիս ամսոյ 16-ին և կրկնաձրդախօսութիւնը նոյն ամսոյ 20-ին երեկոյեան 7 ժամից ց'10 ժամն։

Մամուլի տակից դուրս եկաւ „ԵՒՏՈՒՇԵՒՍԿՈՒ ԹՈՒՄԱՆԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԻ“ առաջին մասը հայ լեզուով։ Աշխատասիրութիւն Մարտիրոսի Սիմէօնեանց։

Ծախվում է պ. Վ. Պետրոսեանցի և ընկ. գրավաճառանոցում և „Մեղուի“ խմբագրատանը։

Գինն է 60 կ., 10 հատ գնողների համար 55 կ., 100 հատ գնողներին 50 կ.։

1 (3)

Բացուեցաւ ջինս ԿԱԽԵԹՈՒ ԳԻՆԻՆԵՐԻ մառան իշխան Ռաֆայել և Ցովսէփ ԷՐԻՍԹԱՎՆԵՐԻ և կախեթու այլ կալուածատէրերի այգիներից. գինը մէկ բուտիլկայի համար 20 կօպ. մինչև 1 ր, 50 կ., առանց տանելի։

ՎԵԴՐԱՆԵՐՈՎ առնողներին 10% զիջումն է լինում։

Ծանօթութիւն. Այս զիջումն չէ վերաբերում այն գինիներին, որոնց բուտիլկան արժէ 20 և 30 կօպ.։

Մառանը գտնվում է Թիֆլիսում, Սեմինարիայի տակը։ 1 (3)

ԳԼԱՋԵՐԻ ՄԱԳԱԶԻՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ

Իր իրեղէնների ընտիր լինելով, ապրանքների հարստութեամբ և բազմատեսակութեամբ աչքին յայտնի, ինչպէս օրինակ՝ սիգարներ զանազան գների, գօլանտերէյնի իրերի օպտիկայի և խիրուրգիայի առարկաներ, ֆիզիկական և մաթեմատիկական գործիքներ, Լէյպցիգի և Փարիզի առաջին գործարաններից, ամբողջութեամբ ԱՆՅԱՒ ՓՈՓԷՎ ԵՂԲԱՅՐՆԵՐԻՆ, դառնալով նրանց սեփականութիւն, որը կը շարունակեն իրանց նախորդի առուտուրը։

ԹԻՖԼԻՍԻ և ՕՏԱՐԱԳԱՂԱՔԱՅԻ հասարակութեանը սորանով յայտնվում է, որ նրանց բոլոր պահանջները կը կատարվին ամեն ճըշդութեամբ և արագութեամբ, և որ ՄԱԳԱԶԻՆԻ ԱՊՐԱՆՔՆԵՐԸ ԱԻԵԼԻ ԷԺԱՆ ԳՆԵՐՈՎ ԵՆ ԾԱԽՎՈՒՄ, ՔԱՆ ԹԷ ԱՌԱՋ

Դիմել՝ նախկին Կուլաչերի մագազինը, Թիֆլիսում, պ. Մխիթարովի տանըում, պ. Նազի Գէորգեան Փիլոօէվին։

4 (5)

Խազուայ Ձայոց մարդասիրական ընկերութեան գրավաճառանոցում ծախվում են պ. Մ. Ջոհրաբեանցի յետագայ դրաւոր աշխատասիրութիւնները յօգուտ աղքատաց

1) Գիտութիւն չնորհաց	40 կ
2) Վէպք զուարճալի անցից	45 »
3) Քանի մի խօսք հոգևոր եկեղեցւոյ	
գլխաւորութեան մասին	30 »
4) Շիլոնեան կալանաւոր	»
5) Պարապոյ ժամք առ Բման	2 ռ.
6) Նուէր ուղղափառ քրիստոնեաներին ա. մասն	50 »
(բ մասը մամուլի տակ է և չուտով լոյս կտեսնի)	
7) Անբաղդ Սանդուխտ Աղուանցի առ Բման	1 ռ. 20 »
8) Ցուցակ իշատակարանի Մ. Ջ մասն	60 »

ТИФЛИССКІЙ КОММЕРЧЕСКІЙ БАНКЪ

ТИФЛИССКОЕ ОТДѢЛЕНІЕ ГОСУДАРСТВЕННАГО БАНКА

Тифлисское Отдѣленіе Государственнаго банка увѣдомляетъ, что съ 11-го января 1874 года, банкъ принимаетъ и выдаетъ вклады:

Принимаетъ:

1. Отъ частныхъ лицъ, капиталы на текущій счетъ:
   а. Съ правомъ полученія обратно
   Въ теченіе мѣсяца 6½%
   Свыше мѣсяца 7%
   б. Безъ права полученія обратно
   Въ теченіе мѣсяца 7½%
   Свыше мѣсяца 8%
2. Отъ частныхъ лицъ, капиталы
   Подъ залогъ золота и серебра 7%

3. Отъ Обществъ
   До 6 мѣс. 8%
   До 9 мѣс. 8½%
4. Подъ залогъ
   Недвижимости 9%
   Товаровъ 10%

Выдаетъ:

1. Ссуды подъ залогъ . . . 5%
2. Подъ векселя 5%
3. „ „ „ свыше мѣсяца . . . 5%
4. „ „ „ до года . . . 6%
5. Въ кредитъ на одинъ годъ подъ залогъ недвижимости.

(а. м.) 3.

Թիֆլիս. 25 Ապրիլի 1874.

ՏԵՂԵԿԱՑՈՒՑ

ԹԻՖԼԻՍԻ ՎԱՃԱՌԱՆՈՑ

(Ապրիլի 24-ին)։

	Ր.	Կ.
Ոսկին (պօլումպրիալ). .	5	97
Բամբակ երևանու (հին սերմից) . .	4	20
„ Ամերիկայի սերմից	5	80
Բուրդը թուչի . . .	6	
թաթաքամի . .	3	80
Շաքարը ռսի (բրօկով)	8	
„ միւս տեսակը .	7	80
„ զադրան, տրանզիտ . . .	4	95
„ մաքսը վճարած	8	10
Շաքարաւազը Ռսի . .	6	60
Դահվա Լիվանի լաւը .	18	50
„ Մօկօ չատ լաւը	20	50
„ Մարտինկօի ցածր	16	50
Աւիւրը երևանի . . .		90
Աւիւրը Գանձակու հասարակ. . . .	1	
„ Շօրագհալու. .	1	
Գարին	„	60
Մոմ.	11	
Փոխանակագիր Պօլի	6	65
„ Դավրէժի	4	60
Լօնդօնի կուրսը (0գնասայի վերայ) 1 լիրան արժ է. .	7	17
Մարսէլ և Փարիզ 350 ֆր. արժ է.	100	

ՓՕՍՏ

Ռուսաստան և Արտասահման ամեն օր։

Երկուշաբթի

Երևանի գաւառ, Քութայիս, Չէրնամօրի վիճակ, Սուխում։

Երեքշաբթի

Բագու, Գանձակ, Դաղստանի նահանգ (թեթև փոստը)։

Չորեքշաբթի

Քութայիս, Ալէքսանդրապօլ, Ախալցխա։

Ուրբաթ

Երևան, Քութայիս, Նուխի Զաքաթալ, Ախալցխա։

Շաբաթ

Բագու, Գանձակ (ծանր փոստը)։

	կօպ.
Բաց նամակը արժէ. .	5
Ռուսաստան նամակը	10
Գերմանիա, Աւստրիա	10
Ֆրանսիա.	13
Անգլիա	14
Շվէյցարիա.	14
Թուրքիա (կ. Պօլիս .	20
Թիւրքիա (ցամաք) . .	20
Իտալիա	16
Ամերիկա	28
Պարսկաստան . . .	10
Հնդկաստան	70
Եգիպտոս	27

ՓՕՍՓԻ-ԹԻՖԼԻՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Թիֆլիսից մինչև Փոթի (ճանապարհորդների գնացքը) 8 ժամին 18 րոպէ առաւօտեան։ Մինչև Սուրամ (խառն գընացքը) երեկոյեան 8 ժամ. 17 րոպէ։

	առաւօտ.	երեկոյեան
Թիֆլիսից . .	8. 18	8. 17
Մցխէթ . . .	9. 18	10.
Գորի. . . .	11. 39	1. 43
Սուրամ. . .	1. 52	4. 30
Քութայիս . .	7. 55	
Փոթի. . . .	11. 27	

	առաւօտ.
Փոթիից . .	7. 38
Քութայիս . .	10. 12
Սուրամ. . .	4. 57
Գորի. . . .	7. 23
Մցխէթ. . .	9. 52
Թիֆլիս. .	10. 49

Թիֆլիս գալիս է ճանապարհորդների գնացքը երեկոյեան 10 ժամին 49 րոպէ։

Տեղերի գինը՝ Թիֆլիսից

	I կլաս.	II կլ.	III կլ.
Մցխէթ .	90	68	38
Գորի. . ,	3. 20	2. 40	1. 33
Սուրամ.	5. 22	3. 92	2. 18
Քութայիս	9.	6. 75	3. 75
Փոթի . .	13. 1	9. 75	5. 42

ՀԵՌԱԳԻՐ

Քանի բառից կազմված հեռագիրը ածէ՝

	Ր.	Կ.
Ալեքսանդրապօլ .	1	
Ախալցխա . .	1	
Ամարախան . .	2	
Բագու	1	
Գանձակ. . . .	1	
Գօրի. . . .		50
Երևան	1	
Շամախի. . . .	1	
Կօդժօր		50
Քութայիս . . .	1	
Մօզդօկ. . . .	1	
Մօսկվա. . . .	2	
Ս. Պետերբուրգ .	3	
Հին Նախիջևան .	1	
Նոր-Նախիջևան .	2	
Նիժնի-Նովգորօդ	2	
Փոթի.	1	
Աւստրիա . . .	2	75
Անգլիա. . . .	3	75
Գերմանիա. .	2	63
Թիւրքիա (Եւրօպ)	3	
„ (Փոթիով)	3	75
Ֆրանսիա . . .	3	50

ՓՕՍՏԻ ԿԱՌՔԵՐ

Թիֆլիսից վլադիկավկաս ամեն օր՝ ամառը 6 ժամին կէս օրից յետոյ իսկ ձմեռը 4 ժամին։

Թիֆլիսից Պիատիգօրսկ, Ստավրապօլ և Բօստով՝ հինգ չաբթի և չաբաթ օրերը 6 ժամին առաւօտեան։

ՆԱԻԵՐ

Օդեսայից Փոթի (ամառը) նաւը դուրս է գալիս հինգշաբթի օրերը ժամը 2-ին կէս օրից յետոյ։

Փոթիից Օդեսայ՝ կիրակի 6 ժամին կէս օրից յետոյ։

Օդեսայից Փոթի (ձմեռը) հինգշաբթի օրերը 3 ժամին։

Փոթիից չորեքշաբթի օրերը առաւօտեան։

Փոթիից Կ. Պօլիս նաւը դուրս է գալիս կիրակի առաւօտները։

Կ. Պօլսից Փոթի կիրակի առաւօտները։

ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Երթևեկ հիւանդների համար գտնվում է Ս. Նչան եկեղեցու մօտ եագօր Ղարաչևի տանը և բաց է ամեն օր հիւանդների ընդունելութեան համար առաւօտը 9 ժամից մինչև 1 ժամը։

ԿՈՎԿԱՍԵԱՆ ՄՈՒԶԷՈՒՄ

Բաց է երեքշաբթի, ուրբաթ և կիրակի օրերը, առաւօտը 10 ժամից մինչև կէս օրից յետոյ 5 ժամը.

ՀԱՅԱՐԱԿԱԿԱՆ ԴՐԱԴԱՐԱՆ

Բաց է ամեն օր, բացի կիրակի և տօն օրերից 12 ժամից մինչև կէս օրից յետոյ 5 ժամը։

Ս. ՊԵՏԵՐԲՈՒՐԳԻ ԲՕՐՍԱ

(Ապրիլի 12-ին)

Լօնդօն մի րուբլ ածէ 33¼ պէնս (փոխանակ 40 պէնս)։
Փարիզ մի րուբլ ածէ 349 սանտիմ (փոխանակ 400 սանտիմ)։
Առաջին 5% փոխառութեան տուեալ 167
երկրորդ 163½
5% բանկի տոմս. 1 շրջանի 97¼
„ „ „ 2 „ 97
„ „ „ 3 „ —
Երկաթուղիների գլխ. ռուս ընկերութ. ակցիա ածէ . 146¾
Մօսկով—Րիազան երկաթուղի . . . . . —
Рус. Общ. Парах. и Тор 567
Кавк. и Мерк. . . . . —
Վարշավի—Տէրէսպօլի երկաթուղին. 112

«ՄՇԱԿԻ» ՊԱՏԱՍԽԱՆՆԵՐ

—Ղարաքլիսա. Ա. Ֆ. Տ. Ս. Ձեր պահանջած համարները և «փունջը» ուղարկեցինք։

—Թիֆլիս. Հայոց Վիճակային Կօնսիստօրիա. Ձայտարարութիւնը տարածեցինք, և միւսն էլ տպեցինք։ Ընդամենը պիտի ստանանք ձեզանից՝ 7 րուբլ։

—Ձընէվ. Փ. Վ. Շնորհակալ ենք Ձեր հաճախութեան համար։ «Մշակի» թիւնամիները այնքան բազմացան, որ ամենափոքր համակրութիւնը մեզ ուրախացնում է։

Дозволено Цензурою. Тифлисъ, 24 Апрѣля 1874 г.

Մելիքովի և ընկ. տպարան

Խմբագիր—հրատարակող ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ